



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGA

✓
1044

1099



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐ ՀԱՄՈՐԷՆ ԼՐՈՒԹԻՒՆ ԵՅՅԻՄ ՀՇՈՑ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ

511.

1867




ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՍ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ

Երևան, ՀՀ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՀԱՄՐԻՆ ԼՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ



Ազգին օգուտ մը ըրած չենք ըլլար՝ թէ որ
սա անժխտելի ճշմարտութիւնը պատրուակելու
ըլլանք թէ — Ազգը Բարեկարգութեան Կարօք է — :
Ասի շատերէն 'ի վաղուց հետէ ճանչցուած ըլ-
լալով, դանաղան դաղափարներ յառաջ բեր-
ուած են ազգին առ Կարօք-Նիւնը լեցնելու հա-
մար :

Ազգին մէջէն ոմանց խորհրդի առած դաղա-
փարներէն մէկը՝ ազգը պապական եկեղեցիին հը-
պատակեցնելն եղած է. (որոց բերան եղած է՝
մանաւանդ այս օրերս, Սէճմուս. և շատոնց
'ի վեր՝ երեսակ) : Աս նպատակը յառաջ տանե-
լու համար շատ ջանքեր 'ի դործ դրուած են և
կը դրուին ցարդ թէ յայտնի և թէ դաղանի :

Սակայն փորձը ինքնին ցցուցած է թէ՛ Ազ-
գը այդ օտարօտի խորհրդին կարեւորութիւն և
կամք չ'տուաւ և պիտի չիտայ. որովհետև պա-
պականութեան հպատակող և անոր կործանիչ
առաջնորդութեամբը՝ կառավարուող ազգերը՝ չէ-
թէ միայն չքարելաւացան, այլ և իրենց ունե-

ցած խիստ օգտակար և շահաբեր այլ-բաներն
անդամ, նորա փուճ գաղափարին զոհելով՝ ար-
դիաութեան, թշուառութեան, մէկ խօսքով՝ ա-
պերջանկութեան, ազմկայեց և աղետայն վե-
ճակներու հասան. ուրիշ ազատուելու և նորէն
բարեկարգուելու հնարք կամ ճարք ուրիշ բա-
նով չկրցին գտնել, բայց միայն յեղափոխու-
թիւն, սրտերազմ կամ արիւնհեղութիւններ
ընելով. իսկ անոնք որ տակաւին պապական
ակղբանց ներքեւ գերի մնալ կ'ուզեն և անոր դը-
րութեան կ'հետեւին, ողորմելի վեճակ մը ունին
լուսաւոր աշխարհին առջև, ինչպէս են Ստանիա
և՛. և՛, և բուն իսկ Հռովմի բնակիչները. որոց
մինչև ցայսօր պապական ամենաժանր ու ան-
տանելի լուծին ներքեւ շղթայակապ ընկճեալ և
ճնշեալ մնալու մէկ հասիկ միջոց՝ գազզիոյ ա-
հեղ բանակին զօրութիւնն էր :

Մեր ազգին բարեկարգուելու միջոցներէն այս
մօտ տարիներս առաջներ համարուեցաւ ազգա-
յին Սահմանադրութեանը և կարի իրաւամբ. ու-
րուն նպատակն էր ազգին վարչութեան ղէկը
կրէնն (հոգևոր պաշտօնեայ) և նորա համամիտ
մէկ քանի աշխարհականաց ձեռքէն առնելով
հասարակութեան կամ ընդհանուրին կաճացն ու
տեւելն յաճնել. բայց որովհետև ասիկայ՝ ըստ
յետսամուտ պապական դրութեան, այժմեան մեր

Հայ կղերին քննոցը հաճելի չէր կրնար դալ . վասնորոյ Սահմանադրութեան բարեկամները սպասելու էին անշուշտ բոլոր այն փոթորիկներուն, զորս յարուցանել կ'սպառնար կէտը ի կործանումն Սահմանադրութեան :

Աղերը արդէն ըստ մեծի մասին պապական սկզբունքէն դաղափար առած կամ խմորուած և իրբև իրօք խակ պապական՝ ինքզինք բոլորովին եկեղեցի և գլխաւոր ազգին սեպած ըլլալով, Հայկական կամ որ նոյն Սուսաւորչական սկզբանց և դրութեան հակառակ՝ շուզեց ազգին կամքն ու իրաւունքը յարդել, ինչպէս վերջին օրերն ալ այս երկրորդ փորձով յայտնի եղաւ . Պապիւնքիւ իր մէկ քանի համախոհներով իրաստանութեան խնդիր մը յուզեց և խսկոյն սահմանադրութիւնը կրից զոհ ընել յաջողեցաւ . յորմէ ազգին ողջամիտ մասը բոլորովին յուսակառուր ըլլալէ ետքը . ազգին վեճակն ալ աւելի դժբաղդ և յետադիմութեան մէջ (պապականացեալ կղերին ձեռքը դերի) ի յնիլը՝ խելքը դուրս եղողներուն ստջիւ յայտ յանդիման երևցաւ :

Եւ ահաւասիկ այսքան փորձերէն վերջը՝ պարզաբար կ'տեսնուի թէ՛ այս ձեռք առնուած միջոցն ալ կարող չեղաւ և պիտի չըլլայ զազգը բարեկալցնել կամ բարեկարգել . նոյն կարօտութիւնը դեռ կայ և կ'մնայ և ամէն ազգասէր

սրտերու մէջ ալ զգալն եղած է . սակայն ամենէն յառաջ պէտք է դիտնալ և հասկնալ թէ՛ մեր ազգին այս կարօտութիւնը լցունելու օգտակար միջոցներէն ո՞րն է զգլխաւորն ու առաջինը, և թէ՛ ի՞նչ տեսակ բարեկարգութիւն պակասի մեր ազգին համար, և ի՞նչ ընել հարկ է ազգին այս պակասութիւնը լցունելու ՚ի շինութիւնն ազգին :

Արդ մեր ազգը ըստ մեծի մասին Օսմանեան Տէրութեան հպատակ իբրև եկեղեցական ժողովուրդ մը ճանչցուած ըլլալով, կրօնական բաներու կատարեալ արտօնութիւն տրուած է իրեն, իր կրօնական դործերը կարգադրելու և ազատութեամբ վայելելու համար :

Քաղաքական իշխանութիւնը՝ այն է Տէրութիւնը, ուրիշ ամէն իրաւասութիւն իբեն պահած է . ուստի ազգին մէջ անկէ տարբեր բարեկարգութիւն մտցունելու ջանքը՝ ոչ միայն ՚ի վտր, այլ և աւելորդ աշխատանք մ'է :

Մեր Օգոստոսիառ Սուլթանը՝ թէ և ամէն բաներու մէջ իրաւանց հաւասարութիւն շնորհած է բոլոր իր հպատակ ժողովրդոց անխաիր բուն իր կրօնակցացը պէս՝ իբրև հայրենեաց որդիք . սակայն քաղաքականին դալով, բարեկարգութեան դլուխ կամ առաջնորդ իր ամենաօտարձո կամօն ըլլալով . հնօք որչափ յառաջ երթաւ ուզէ,

այնքան ալ մենք հետեւելու պարտական եմք՝ վասնորոյ այդ մասին ընելիք մը չ'մնար մեզի՝ բայց միայն Տէրութեան՝ յօգուտ հասարակաց բարի կարգադրութեանցը հետեւիլ :

Մեր ընելիք բարեկարգութիւնները մի միայն Տէրութեան կողմէն ՚ի վաղուց ազգին շնորհուած արտօնութեանց սահմանին մէջ բնառելու ենք. ինչպէս և մեր ազգային Սահմանադրութիւնն ալ նոյնը զործադրել ջանասիրեց. ուստի ազգը բարեկարգել ըսելը, ուրիշ բան չէ. բայց միայն մտաւոր, բարոյական և կրօնական զարգացման ճշմարիտ մշակութիւնը յառաջացնել ազգին մէջ (ուրիշ ազգը զուրկ է), այն է բարի դաստիարակութեամբ ազգին զաւակները կրթել. ուսման և արուեստից և քրիստոնէական բարեպաշտութեան մէջ միանգամայն աճեցնել, (վասն զի տգիտութեան ազգատութիւնն է՝ որ ամէն տեսակ ազգատութիւն կ'բերէ իր հետ, իսկ ուսմունքն ու գիտութիւնը բոլոր ազգատութիւնները կ'ջնջէ), ունենալ բարի ծնողներ. պարկեշտ և հնազանդ զաւակներ, բարեկիրթ քնտանիքներ, ազգային ընկերականութեան օգտակար անդամներ, և ուսմանց համար ալ դիշերօթիկ դպրոցներ (վանքեր), սորվելու և սորվեցնելու միջոցներ, բարեգործական և առևտրական ընկերութիւններ, և բարուոք արհեստ-

սո-նի-ն կամ Տագասկարարո-նի-ն համայն աղղա-
յին կալուածոց և հաստատութեանց, մէկ խոս-
քով և վերջապէս ըլլալ ազգասէր Հայ ժո-
ղովուրդ անձնուէր հպատակ մեզ խնամատար
Տերութեան: Ահա ազգ մը՝ որ այս շնորհքները
ունի և կ'վայելէ այն ազգը բարեկարգ և երջանիկ
և յառաջագէմ ազգ մ'է և արժանի ընդունե-
լութեան:

Անցած ցաւալի արկածները և բովանդակ իսկ
փորձառութիւնները սորվեցուցին մեզի թէ՛ ազ-
գը այս օրհնութեանց մասնակից ընելու համար
ուրիշ միջոց մը չկայ. բայց միայն մեր աղղային
Նկեղեցին, այն է ազգը՝ իր արգի յետադէմ և
խարխուլ վիճակէն ազատել բարեկարգելով.
այսինքն է բոլոր եղծումները բառնալ և չարին
օտար սերմունքները արմատախիլ ընելով բա-
րոյական զգացումը զօրացնել աղղին մէջ. ո-
րով յայնժամ — *հերոց . արքայարարանիւսնն և օրի-
նաց* — ազգաշէն լոյսը կրնայ թաղաւորել ազ-
գին մէջ ըստ կամացն Աստուծոյ:

Անր ազգը ՚ի բնէ բարեսէր ըլլալով. Քրիս-
տոնէութեան (հոգւոյ և խղճի աղատութեան)
պարզ և անարատ կրօնքին բարոյական ճրարք
միշտ վառ պահելու համար, ոչ միայն իր ճո-
խութիւնը, այլև փառքը, այլև զաւկները և
մինչև անոնց արիւնը անդամ չխնայեց. սակայն

աղղային պատմութեան ճանօթ հղող ամէն Հայ
անհատ զիտէ թէ՛ ՚ի սկզբանէ հեռէ ՚ի սրբա-
զան Առաքելոց անտի և ՚ի սուրբ Առաստորչէն
մերմէ աւանդուած Քրիստոնէութեան իմանալի
կանթեղին մէջ՝ ըստ մասին նեղ պարագաներէն
և ըստ մասին կիցաց իշխանասիրական կամ տի-
րապետական ախտադրդիւ շահամօլ ու փառա-
մօլ չարութենէն անանկ պղտորիչ և ապակա-
նիչ եղծումներ սպրդեցան՝ որ Քրիստոնէու-
թիւնը՝ սրտերու մէջ բարեպաշտական սուրբ և
աւելիւ զբացուիլ զօրացնելու և միտքերը իմաս-
տութեամբ լուսաւոր, արթուն և աճեցուն պա-
հելու անդ՝ ՚ի շինութիւն եկեղեցւոյն՝ այն է աղ-
ղին, բոլորովն ազգաքայքայ սիմանականութեան
արհեստ մը դարձաւ. անկէ յաջորդեց մթու-
թեան դարերը : Աշտալն եկեղեցին Հայաստա-
նեայց այնուհեռու անուսումնութեան, թմրու-
թեան և թշուառութեան խորը թափառելով,
կուրութեան, ռամկութեան և նախասպաշարման
մէջ՝ սիրոյ . արդարութեան և երջանկութեան
ճամբան գրեթէ բոլորովն կորսնցուց :

Աղերք բուն իսկ Առաստորչական Քրիստո-
ստանդ անգրանիկ եկեղեցւոյ վաղմի սկզբուն-
քէն իսպառ շնդելով՝ քար դայթակղութեան . և
աղիստութեան մասին՝ ժողովրդին վիճակէն ա-
ւելի թշուառ ըլլալէն զատ, որ ըստ օրէ ալ

պատական զրութեան հակամէտ ըլլալով . նորա համեմատ Սուրբ Արօնքը միջոց մը ըրաւ Աստուծոյ ազատ ժողովուրդը կեղեքել , դերել և հարստահարել և ազգային մարմինը՝ այն է Հայաստանեայց եկեղեցին , 'ի նպատտ պատականութեան կամ բողոքականութեան , կօ , մաս մաս յօշոտել , պառակտել , և նորա սեփական իրաւունքը կամ իրաւասութիւնը ձեռքէն խլել և յափշտակել : Թէպէտե զանուեցան իր մէջէն անանկ աղնիւ և բարեսիրտ եկեղեցականներ և աս ազգակործան և թշուառ վիճակին վրայ լացին ու ողբացին , դրեցին և բողոքեցին . սակայն նորամոյժ Պարսիստան-ի-նը կամ որ նոյն է Գրաստան-ի-նը՝ իր շահամոլ արբանեակներով ամէն հնարք 'ի դործ դրաւ անոնց ալ բերանը դոցելու , հալածելու և մինչև 'ի մահ մատնելու . և այսօր նոյն ազգակործան պարսիստան-ի-նն է՝ որ ազգին պառակտման և թշուառութեան ու յետադիմութեան սկզբնապատճառն ու շարժառիթը եղած է . կօ . կօ :

Այս բանը արդէն շատերէն ճանչցուած , և շատերն իսկ ազգին այս դառն ու վտանգաւոր վիճակը ու ներքին ցաւը զգացած են . և այս չորս հարիւր տարուոյ փորձ մ'է , բայց տակաւին ոչ ոք դարմանող կամ ճարը մտածելու ջանադիր . որպէս զի ազգը ասանկ ազգակործան

և դահապէժ ^{բնական} կարող ըլլար ազատիլ :
 Արդեօք ի՞նչ է պատճառը . մի՞ թէ ժամանա-
 կիս նեղութիւնը կամ անձկութիւնը և ազգին
 աղքատութիւնն ու չքաւորութիւնն է . ոչ, ոչ .
 վասնզի ինչպէս կ'տեսնեմք , հրկիզութեան ա-
 տենը անգամ երբ կրակը կ'մօտիկնայ՝ մի՞ թէ
 կ'թողուն մարդիկ՝ որ թէ իրենք և թէ իրենց
 ընտանիք կահ կարասիք մէկ տեղ հրոյ ճարակ
 ըլլան , քաւ լեցի . այլ բոլորովին իրենց անձ-
 նական զբաղմունքը և մէնչև անօթութիւնն ան-
 գամ մոռնալով կամ մէկզի՞ թողլով , կ'աճա-
 պարեն կ'հասնին . որ դոնէ ինքզինքնին և իրենց
 ընտանիքը ազատեն , և եթէ հնարը գտնեն նաև
 տան բոլոր կահկարասիքն ալ 'ի միասին : Ահա
 այսպէս և ազգին ազատութիւնը . որուն համար
 ամենէն յառաջ ամէն ճիգ և ջանք 'ի գործ
 դնել պարտ և արժան է՝ որ եթէ ոչ տունը
 կամ գոյքը՝ գէթ ընտանիքը՝ այկայ սերունդը
 ազատել կարող ըլլան թաղց փնասու , որչափ
 կարելի է շուտով , և եթէ հնար է մինչև օ-
 բորօցին երախայն անգամ :

Միջոցէ մը 'ի վեր է կ'լսենք և ընկերութիւն-
 ներ կ'նշմարտին ազգին մէջ՝ այկական . լու-
 սաւորչեան և՛ , նաև մօտ օրերս ալ՝ ազգին ըն-
 թերցանութեան օժանդակ՝ անուկով . բայց ի՞նչ
 է իրենց նպատակը և ի՞նչ գործ կ'ընեն և ի՞նչ

քանի համար կ'աշխատին . դեռ կատարեալ յայտ
նրուած չէ և իրենք ալ արգիւնք մը ցցուցած չին
սակաւին , որոց ազդօղուտ գործերուն շատերն
ալ անհամբերաբար կ'սպասեն թէ՛դէտ . սակայն
մենք չկրնալով դիմանալ ալդին կրած այս
դառնաղէտ ցաւերուն , թերեւս օր յառաջ մեր
մասնաւոր այս խորհրդածութիւնը ընդհանուր
ճայ հասարակութեան հաղորդել կարեւոր հա-
մարեցինք . ուստի և փութացինք 'ի հրատա-
րակութիւն :

Քանզի մենք՝ քանի մը դիտող ճայքս , հա-
մողուած ըլլալով առաջի Աստուծոյ թէ՛ ալ
դը պէտք ունի և կարոտ է բարեկարգութեան
և թէ՛ խիստ կարեւոր ու զգալի եղած է այս
պէտքը . և թէ՛ եկեղեցին բարեկարգել . ըսելը
ալդք բարեկարգել՝ ըսել է , ուստի մեր սրբա-
զան պարաւորութիւնէն ստիպեալ ալդին այս
կարօտութիւնը լցունելու մէկ հատի միջոցը ցոյց
տալու մտքով՝ ճայաստանեայց լուսաւորչական ե-
կեղեցւոյ բուն սկզբնէն ու դրոմիւնը հարկադ-
րեցանք նշանակել հոս 'ի սէր ալդին և ամենուն
ուշադրութիւնը հրաւիրել անոր վրայ . որուն
վաղէմի գրութեան հիմունքը՝ սա հետեւեալ չորս
կէտերու վրայ կ'կայանայ :

Ե. — ճայաստանեայց լուսաւորչական անդ-
րանիկ Սուրբ եկեղեցին , ճաւատալեաց մէջ՝

մեր սուրբ Հօրք Լուսաւորչին ուղղափառ վարդապետութիւնը կ'ընդունի, որուն հիմն ու բարի վարուց կանոնը՝ հին և նոր կապիտանն է. որուն սորվեցուցած զլիաւոր և էական վարդապետութիւնները՝ որոնք նիկիոյ հանդանակին մէջ պարունակուած են, և ինչ որ 'ի սուրբ զրոյ հաստատուած է, հաւատոյ և պարտաւորութեանց մաս կ'ձանձնայ :

Բ. — Ըզօթարանաց՝ այն է Սուրբ տաճարաց մէջ ուր սուրբ Մեստարանի և բարոյական քարոզութեանց հետ, նաև հոգևոր Մատուածպաշտութիւն կ'կառարուի և ըստ պատշաճի սրբոյ յիշատակութիւն ալ կ'ըլլայ. արարողութեանց մասին զայլով, Մատուածպաշտական սուրբ զգացումը ջերմ և եռանդուն պահելու համար՝ մեր Լուսաւորիչ սուրբ Հօրէն ազգին աւանդուած պարզ և փայլուն կերպը և սրբասացութեանց եղանակներն ալ իրենց փափկութեամբը, նոյնպէս և պարզ նիւթերէ դործածուած զգեստներն ալ իրենց զեղեցիկ ձևովը կ'գործածէ :


Գ. — Իսկ կազմակերպութեան դպրով ըստ վաղեմի զրութեան՝ եկեղեցին կացուցանողը՝ չէ թէ կզերբ, այլ Մատուծոյ ժողովուրդն է, առանց խարութեան կզերի և աշխարհականի. և եկեղեցականը՝ Մատուծային հեղինակութեամբ ազացուցուած պաշտօնեւ

Թենէ՛ այն է Աւետարանական քարոզութենէ
 և հոգևոր մատակարարութենէ կամ տնտեսու-
 թենէ զատ, ուրիշ արտօնութիւն կամ իշխա-
 նութիւն մը չունի և չկրնար ալ ունենալ — ու-
 սուցէք՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ — ոչ թէ
 հրամայեցէք կամ իշխեցէք կամ տիրապետե-
 ցէք — : Արդեա՛հս զանոնք ՚ի պաշտօն կոչելու
 կամ ընտրելու իրաւունքն ալ ^օայաստանեայց
 եկեղեցւոյ զաւակաց վաղեմի և սեփհական իրա-
 ւունքն է :

Գ. — Արչական օրէնքին դալով, ազգային
 տնտեսութիւնը՝ մի և նոյն ^օայաստանեայց ե-
 կեղեցին կազմող մարմնոյն այն է ազգին կ'վերա-
 բերի (որուն մէջ եկեղեցականը երբէք մաս չունի)
 և ընդհանուրին կամքէն յառաջ եկած երեսփո-
 խանութիւն մը հաստատելով, նախադաս մը
 այն է ազգապետ մը իր մէջէն կ'ընտրէ և իր առ-
 տնին դործերը կ'հոգայ :

Տէ՛լ Թան՛ի դիպոց
 Լուսաւորչական ^օայեց

1867. վետրվար 2
 Պօլիս :



511

